ԿԱՐԾԻՔ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

2024 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել են «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը:[1]

Նշված նախագծով առաջարկվում են մի շարք փոփոխություններ, ինչպես օրինակ՝ սահմանել լիազորված անձի հասկացությունը, արտաքին ազդարարման դեպքում նախատեսել ազդարարումը նաև լիազորված անձին ներկայացնելու իրավական հնարավորությունը, հստակեցնել ներքին և արտաքին ազդարարման տեսակներով հաղորդումը ստանալուց հետո լիազորված անձի կողմից դրանք քննելու և լուծելու նպատակով իրավասու մարմիններին ներկայացնելու կարգը, սահմանել ազդարարի հետ՝ իր ներկայացրած հաղորդման ընթացքի վերաբերյալ հետադարձ կապ ապահովող սուբյեկտին, կատարելագործել հանրության ազդարարում տեսակը, նախատեսելով հնարավորություն՝ ազդարարել լրատվամիջոցներին՝ առանց սպառելու ազդարարման մյուս տեսակները: Միաժամանակ, ազդարարման դեպքերի վերաբերյալ արդյունավետ վիճակագրություն վարելու նպատակով առաջարկվում է ներդնել պարտադիր և միասնական կանոններ՝ ներառելով նաև ազդարարների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ընդգրկել կազմակերպություններին վիճակագրություն ներկայացնող սուբյեկտների ցանկում:

Հայաստանում ազդարարման համակարգի հիմնական խնդիրներն ուսումնասիրվել և ամփոփվել են ԹԻՀԿ 2024 թվականի «Հայաստանի ազդարարման համակարգի համապատասխանությունը միջազգային սկզբունքներին» զեկույցում:[2] Վերհանված խնդիրները վերաբերում են ազդարարման շրջանակներին, սահմանումների և պաշտպանության պայմաններին, ազդարարման ուղիներին և ընթացակարգերին, ազդարարների պաշտպանության միջոցներին, թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Կարելի է փաստել, որ Հայաստանում ազդարարման համակարգը ձախողում է, սակայն մինչև օրս պետության կողմից չեն ձեռնարկվում համապատասխան միջոցներ՝ բարելավելու իրավիճակը: Միաժամանակ, ջանքեր են ներդրվում քարոզելու քաղաքացիներին օգտագործել թերի համակարգով նախատեսված միջոցները՝ առանց երաշխավորելու ազդարարների պաշտպանությունը և ռիսկի տակ դնելով նրանց անվտանգությունը:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում ներկայումս առաջարկվող փոփոխությունները և լրացումները խիստ սահմանափակ ու մակերեսային են: Դրանք չեն հասցեագրում խորքային

---

[1] https://www.e-draft.am/projects/7870
[2] https://transparency.am/hy/publication/pdf/376/11751

հիմնախնդիրները և որևէ կերպ չեն երաշխավորելու համակարգի լավարկում և հանրային վստահության աճ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կոչ ենք անում ՀՀ Կառավարությանը ներկա փուլում ձեռնպահ մնալ քննարկող նախագծերը ՀՀ ԱԺ ուղարկելուց, վերանայել դրանք՝ հասցեագրելով միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության կողմից նշված հիմնախնդիրները, ինչպես նաև համապատասխանեցնելով 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված նպատակներին:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

Իրավունքի պաշտպանության և զարգացման հիմնադրամ